

**ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորման անցած տարիների քաղաքական և տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղությունը եղել է անցումը համայնավարական հասարակարգից ազատ շուկայական հարաբերությունների: Ինչպես նշված է ՀՀ Սահմանադրությունում, ՀՀ-ում արդեն գերակշռող է մասնավոր սեփականության վրա հիմնված շուկայական տնտեսության ձևը: Հատկապես արտադրության միջոցների (հողի, գյուղատնտեսական տեխնիկայի, ձեռնարկությունների և այլն) սեփականության իրավունքի վերափոխման ժամանակ անցած տարիների ընթացքում կիրառվել է «Պետությունը զբաղվում է տնտեսության այն ոլորտներով, որոնք ձեռնտու չեն մասնավորին» բանաձևը: Այս տեսանկյունից հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է ապահովի որդեգրված ուղղության ինչպես հաջորդականությունը, այնպես էլ շարունակականությունը, հակառակ դեպքում ցանկացած շեղում հղի է սոցիալ-տնտեսական և քաղաքական բացասական հետևանքներով:

Վերջին մեկ տարում ՀՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պետական կամ համայնքային սեփականությամբ տնտեսավարող սուբյեկտների ձևավորման նոր ալիք է բարձրանում՝ առանց ուսումնասիրելու և վերլուծելու այդպիսի կազմակերպությունների ստեղծման նպատակահարմարությունը և գործունեության արդյունավետությունը: Ուստի պատահական չէ, որ 2020 թ. հունիսի 4-ին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը տեսակետ ու դիրքորոշում հայտնեց ներկայիս համավարակի պատճառով գործարարների առջև ծագած հմնախնդիրների առնչությամբ: Բարձր գնահատելով ՀՀ կառավարության ջանքերը և աջակցություն հայտնելով երկրի վարչապետին՝ գործարարները մտահոգված են, որ ՀՀ կառավարության որոշ պաշտոնյաներ ու ՀՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորներ հայտարարում են պետականացման, ազգայնացման գործընթացներ սկսելու անհրաժեշտության մասին: Նման մոտեցումը դիտվում է որպես ակնհայտ նահանջ տնտեսական ազատականության գաղափարներից, ազատ շուկայական տնտեսության կառուցման քաղա-

քականությունից¹, ինչը, անկասկած, բացասաբար կանդրադառնա երկրում ձևավորված գործարար միջավայրի վրա և չի նպաստի ո՛չ մրցակցային միջավայրի բարելավմանը, ո՛չ էլ ներդրումային լուրջ ծրագրերի իրականացմանը:

Խոսքը վերջին ամիսների ընթացքում հնչած մի շարք առաջարկությունների մասին է, որոնց ենթատեքստը պետական կամ համայնքային կազմակերպություններ ստեղծելն է, որոնք իրականացնելու են որոշակի գործառույթներ կամ մասնավորեցման գործող ծրագրից (ավելի ստույգ՝ մասնավորեցման առաջարկվող պետական բաժնետոմսերով ընկերությունների ցանկից) որոշակի առևտրային կազմակերպություններ հանելը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանը հիմնեց աղբահանություն իրականացնող ծառայություն՝ այն հիմնավորմամբ, որ մասնավոր ընկերությունները, հետապնդելով շահույթ ստանալու նպատակ, աղբահանության ծառայությունները լավ չեն կազմակերպում: Ընդ որում, հաշվի չի առնվում, որ քաղաքապետարանը այդպես էլ չկարողացավ հանգուցալուծում տալ աղբահանություն իրականացնող կազմակերպության հետ վեճին, որը ժառանգություն էր մնացել քաղաքային նախկին իշխանություններից: Պետք է փաստել, որ այս անգամ ևս առաջնություն տրվեց ամենահեշտ, սակայն միևնույն ժամանակ ամենաանարդյունավետ ճանապարհին՝ վերացնել հինը և ստեղծել նոր կազմակերպություն, որի կառավարման լծակները լինելու են քաղաքապետարանի ձեռքում:

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հավաստող բաժնետոմսերի իրավունքները 2006 թ.-ից հանձնվել են «Հայփոստ Թրասթ» բաց բաժնետիրական ընկերության հավատարմագրային կառավարմանը, այնուհետև՝ «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությանը: Պայմանագրի գործողության ժամկետը վերջին անգամ երկարաձգվել է ՀՀ կառավարության 2019 թ. հունիսի 6-ի № 704-Ա որոշմամբ և ավարտվել է 2020 թվականի փետրվարի 15-ին: Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո, առանց լուրջ փաստարկների ու մեկնաբանության, հավատարմագրային կառավարման պայմանագրի ժամկետը չերկարաձգվեց, բացի այդ՝ որոշում չկայացվեց որևէ այլ ձևով մասնավոր կառավարիչ ներգրավելու վերաբերյալ: Ավելին, «Հայփոստ» ընկերությունը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Էներգախիմպեքս» ՓԲԸ-ի հետ ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի նոյեմբերի 19-ին ընդունած «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մա-

¹ Աղբյուրը՝ <https://www.lin.am/2764755.html>, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության հայտարարությունը՝ համավարակի շրջանում գործարարության առջև ծագած խնդիրների առնչությամբ:

սին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-222-Ն) հանվեց 2017-2020 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների ցանկից: Այս հանգամանքը պետական գույքի կառավարման ոլորտում լիազորված մարմնի ղեկավարը դիտարկեց որպես ձեռքբերում, թեև իրականում ավելի մեծ անորոշություն առաջացրեց մասնավորեցման ոլորտում և բացասաբար ազդեց ՀՀ-ում մասնավոր ներդրումների ոլորտում:

Մյուս ոլորտը, որտեղ ներկայիս իշխանությունները պետական ընկերություն ստեղծելու մասին առաջարկություններ են քննարկել (առնվազն հնչեցվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի կողմից), նավթամթերքի ներկրումն է, և սա այն դեպքում, երբ նույն հանձնաժողովի՝ 2017-2019 թթ. համար կատարած ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին երկու տարիներին բենզինի և դիզելային վառելիքի վաճառքով զբաղվող ընկերությունների թիվն ավելացել է (հատկապես դիզելային վառելիքի շուկայում): Ընդ որում, այդ ընկերություններում շահույթի մարժան բավականին ցածր էր՝ 5%. այսինքն՝ հայտնվել է միջնորդ, որը ավելի ցածր արժեքով կներմուծի և վառելիք կբաշխի ՀՀ-ում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին²: Ակնհայտ է, որ պետական կազմակերպությունը չի կարող մրցակցել այդպիսի միջնորդ ընկերությունների հետ. Կա մ այն պետք է ֆինանսավորվի պետական միջոցներից, կա մ իրականացվի կառավարության հովանավորչությամբ: Մասնավոր ընկերությունները, որոնք արդեն ցածր շահույթով են աշխատում, այդ պարագայում չեն կարողանալու մրցակցել պետական հովանավորչությունից օգտվող ընկերության հետ, և դրանով իսկ կխախտվի շուկայական տնտեսության կազմակերպման հիմնարար սկզբունքներից մեկը, այն է՝ շուկայում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման սկզբունքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ թեև պետական կազմակերպություններ կան գրեթե բոլոր երկրներում, սակայն դրանց տնտեսություններն էլ պետական սեփականությունից անցնում են սեփականության բազմազանության վրա կառուցված տնտեսության: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության հոդված 10-ով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Հաջորդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական

² Տե՛ս «Բենզին» և «Դիզելային վառելիք» ապրանքային շուկաներում իրականացված ուսումնասիրության արդյունքները», ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, Եր., 2020, էջ 24:

շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը³:

Ընդհանրապես, հանրային (պետական) կամ համաժողովրդական սեփականության ձևի ընտրությունը պայմանավորված է պետության տնտեսական դերով: Աշխարհում չկա այնպիսի երկիր, որտեղ պետությունը չգրադվի որևէ տնտեսական գործունեությամբ: Պետական սեփականությունն անհրաժեշտ է տնտեսության մակրոկարգավորման և պետության այլ խնդիրներ լուծելու համար: Ընդունված է, որ պետական սեփականությունը գործում է պակաս արդյունավետությամբ, քան սեփականության մյուս ձևերը: Որպես կանոն պետական սեփականությունն ընդունված է այնպիսի ոլորտներում, որտեղ շուկայի հնարավորությունները խիստ սահմանափակ են, մյուս կողմից՝ պետական սեփականության արդյունավետությունը նորմալ գործող շուկաներում նվազում է, որովհետև սեփականատերը անդամ է, իսկ պետական ձեռնարկությունը ճկուն չէ և չունի շուկայական կողմնորոշում:

Տնտեսության մեջ պետական հատվածը կարող է բնութագրվել մի շարք ցուցանիշների օգնությամբ, որոնցից հիմնականներն են թողարկված ՀՆԱ-ի կազմում պետական ձեռնարկատիրության բաժինը, պետական հատվածում զբաղվածների բաժինը ողջ տնտեսության զբաղվածների թվաքանակում, պետական հատվածի ակտիվների բաժինը տնտեսության ակտիվների կառուցվածքում: Իսկ տնտեսության պետական և ոչ պետական հատվածների համար դրանց գործունեության չափանիշը պետք է լինի ներդրված միավոր ռեսուրսի դիմաց ստացված արդյունքի մեծությունը: Սակայն մի վերապահմամբ. երբ համեմատվում են տնտեսության պետական և ոչ պետական հատվածները, պետք է նկատի ունենալ, որ շատ հաճախ պետական հատվածի դերը պետության ներսում սոցիալական խնդիրների լուծումն է (հիմնականում բնակչության զբաղվածության ապահովումը) և ոչ թե զուտ առևտրային գործունեությունը, որի նպատակը շահույթ ստանալն է: Դա նախ և առաջ բացատրվում է այն բանով, որ գոյություն ունեն տնտեսական գործունեության որոշ տեսակներ, որոնք ձեռնտու չեն մասնավորին: Այդպիսի պատճառներ կարող են լինել այդ գործունեությունների վնասաբեր կամ ցածր շահութաբեր լինելը, հսկայական մեծության ներդրումների անհրաժեշտությունը, որը մասնավորի ուժերից վեր է, զուտ տնտեսական շարժառիթների փոխարեն սոցիալական խնդիրների լուծումը (երբ նույնիսկ տվյալ գործունեության վնասաբեր լինելու պայմաններում բնակչության զբաղվածությունն ապահովվելու

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), հոդված 11, ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեով:

նպատակով պետությունը ֆինանսավորում է այդ ոլորտները, կամ տվյալ ոլորտի վնասաբերությունը վերանայելուց հետո այն առաջարկվում է օտարման) և այլն:

Ներկայումս էլ պետական ձեռնարկատիրությունը դիտարկվում է ոչ թե որպես ինքնանպատակ գործունեություն, այլ ինչպես առանձին ճյուղերի, այնպես էլ ամբողջ տնտեսության որոշակի հիմնահարցերի լուծման գործիք: Այն հետապնդում է ինչպես զուտ տնտեսական, այնպես էլ հանրային նպատակներ: Բանն այն է, որ պետական ձեռնարկությունները ունեն այսպես կոչված «հասարակական պարտավորություններ», այսինքն՝ իրականացնում են ոչ առևտրային գործառնություններ, որոնց նպատակահարմարությունը չի բխում առավելագույն եկամուտ (շահույթ) ստանալու սկզբունքից:

«Պետական ձեռնարկատիրություն» հասկացության հիմքում դրված է երկու հիմնարար սկզբունք. ա) պետական կամ հանրային, որով ամրագրվում է գործունեության կողմնորոշիչը՝ ի դեմս պետական կամ հանրային օգտակարության կամ շահի, և բ) ձեռնարկատիրական, որով ամրագրվում է այդ նպատակին հասնելու ճանապարհը: Այս սկզբունքները սերտորեն միահյուսված են՝ փոխադարձաբար լրացնելով ու սահմանափակելով միմյանց: Դրա հետ մեկտեղ՝ այդ միասնությունը քարացած չէ և կարող է արտահայտվել ծրագրված վնասով գործելու, միայն ծախսերը փոխհատուցելու, շահույթի այս կամ այն մակարդակն ապահովելու եղանակներով:

Պետական ձեռնարկատիրության (տարբեր կոնկրետ դրսևորումներով) հիմնական առանձնահատկությունն այն է, որ վերջնական սեփականատերերը (քաղաքացիները) ինքնաբերաբար, երբեմն էլ ոչ ինքնակամ օժտվում են սեփականատիրական իրավունքներով, ինչը հաճախ ձևական է: Ի տարբերություն բաժնետիրոջ (կամ յուրաքանչյուր մասնավոր ընկերության փայտատիրոջ)՝ պետական ձեռնարկության վերջնական սեփականատերն ավելի շատ տիրապետելու ձևական և ոչ թե իրական իրավունք ունի, իր սեփականությունից ընդհանրապես եկամուտ չի ստանում կամ էլ ստանում է այնպես, որ հնարավոր չէ այն դիտարկել որպես եկամուտ:

Ձեռնարկատիրության յուրաքանչյուր տեսակ ունի գործունեության իր նպատակ(ներ)ը և հիմնական խնդիրները: Պետական առևտրային կազմակերպությունների գործունեության նպատակները պետք է լինեն ընդհանուր, այսինքն՝ արտացոլեն հասարակության անդամների (քաղաքացիների) մեծամասնության շահերը: Դրանք կառավարությունների առջև դրված նպատակների իրականացման համար ծառայում են որպես համատնտեսական կարգավորման գործիք կամ կարող են ստեղծվել որպես մասնավորին այլընտրանք:

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետական ձեռնարկատիրությունը՝ որպես մասնավորին այլընտրանք, հիմնականում

ձևավորում են սոցիալ-ժողովրդավարական (նաև լիբերալ-ժողովրդավարական) կողմնորոշմամբ կառավարությունները: Որպես պետական առևտրային կազմակերպությունների ստեղծման հիմնավորում բերվում է դրանց տնտեսավարման թվացյալ բարձր արդյունավետությունը մասնավորների համեմատությամբ, և պետական առևտրային կազմակերպությունների հիմնադրման ժամանակ առաջին հերթին հաշվի են առնվում հանրային կարիքների (պահանջների) բավարարման անհրաժեշտությունն ու բնակչության գնողունակությունը: Ավելին, կարծիք կա, որ գրեթե բոլոր պետական առևտրային կազմակերպությունները չպետք է շահույթ ստանալու նպատակ հետապնդեն: Այս տեսակետն առավել տարածված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, ինչը բացատրվում էր պատերազմին մասնակցած երկրների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությամբ:

Փաստորեն ենթադրվում է, որ պետական առևտրային կազմակերպությունների աշխատակիցները պետք է ունենան պատասխանատվության հատուկ ոգի, ինքնակարգապահություն և անձնական նվիրվածություն, որոնց շնորհիվ կապահովվի նրանց և հասարակության շահերի միասնությունը: Շահերի միասնության դեպքում հասարակությունը կկարողանա միջոցներ խնայել աշխատողների արդյունավետ աշխատանքի հաշվին, ինչը բացարձակապես անհրաժեշտ է և անխուսափելի այնպիսի իրավիճակում, երբ մի կողմից՝ աշխատողների շահերը չեն համընկնում արտադրության միջոցների սեփականատերերի շահերի հետ, իսկ մյուս կողմից՝ երկուսի շահերը ոչ միշտ են համընկնում սպառողների շահերի հետ (նման մոտեցումները բնորոշ էին նաև «սոցիալիստական պետական ձեռնարկությունների» ստեղծման և գործունեության «փիլիսոփայությանը»):

Անդրադարձ կատարելով հատկապես վերջին տարիներին պետական գույքի մասնավորեցման և պետական ձեռնարկատիրության միտումներին և դրանց միջև հարաբերակցության ձևավորմանը՝ անհրաժեշտ է նշել, որ 2018 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD, ՏՀԶԿ) ծավալուն վերլուծություն է հրապարակել, ըստ որի՝ զարգացած երկրներում ընդհանուր քաղաքականությունն այն է, որ պետական մասնակցությամբ հնարավորինս քիչ ընկերություններ մնան տնտեսությունում: Այսպես, 2008 թվականից ի վեր զարգացած երկրներում մասնավորեցումից ստացված եկամուտներն աճել են՝ 2008 թ. 110 միլիարդ ԱՄՆ դոլարից 2016 թ. հասնելով 266 միլիարդի:

ՏՀԶԿ երկրներից 2008 թվականից հետո իրականացված մասնավորեցման գործարքների մեծ մասը տեղի է ունեցել եվրոպական երկրների տնտեսություններում: 2015 թ. Եվրամիության 25 երկրներում մասնավորեցումից ստացված եկամուտները աննախադեպ բարձր էին՝

87 միլիարդ ԱՄՆ դոլար: Ի թիվս մյուս գործոնների՝ եկամուտների նման բարձր մակարդակը պայմանավորված էր Միացյալ Թագավորությունում և մյուս երկրներում ֆինանսական ճգնաժամի սկզբում այդ երկրների ֆինանսական հատվածի միջոցների բազմազանեցմամբ (դիվերսիֆիկացմամբ), որի արդյունքում պետական հատվածին զգալի բաժին էր հասել: Մինչև 2016 թ. մեծ թվով մասնավորեցման գործարքներ են կատարվել, սակայն դրանց արժեքի միջին մեծությունը գնալով նվազեց, և 2016-ին մասնավորեցման եկամուտները կազմեցին 38 մլրդ ԱՄՆ դոլար, որոնք հիմնականում ստացվել են պետական կոմունալ և ենթակառուցվածքների ոլորտների կազմակերպությունների մասնավորեցման հաշվին:

Այդ զեկույցում նշվում է, որ 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն սկսվելուց ի վեր Եվրամիության երկրներում մասնավորեցում և ապապետականացում տեղի են ունեցել բազմաթիվ երկրներում (Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Շվեդիա, Հունաստան, Նիդերլանդներ, Գերմանիա և այլն): Ֆրանսիայում և Միացյալ Թագավորությունում ընդհանուր գործարքների մեծությունը շուրջ 80 մլրդ ԱՄՆ դոլար էր, իսկ այդ երկրներից յուրաքանչյուրին բաժին է հասել ԵՄ երկրներում իրականացված ընդհանուր գործարքների քանակի 18-ական տոկոսը:

Վերջին տարիներին Եվրոպայում մասնավորեցման գործարքների բաշխումը տեղի է ունեցել ֆինանսական և անշարժ գույքի ոլորտների միջև: Այս հատվածների ներդրումը 2008-2016 թթ. գնահատվում է շուրջ 206 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը նրանց ընդհանուր եկամուտների 47 տոկոսն է: Սա հիմնականում արտացոլում է կառավարությունների ջանքերը՝ «վերջ դնել ճգնաժամին» և վերջ տալ ֆինանսական հաստատություններին տրամադրվող պետական աջակցությանը (միջոցների տրամադրմանը): Ըստ էության, ճգնաժամի ժամանակ դրանք մասնակիորեն ազգայնացվել էին և/կամ վերակապիտալացվել (ներառյալ՝ չքվեարկող բաժնետոմսերի թողարկման միջոցով):

Մասնավորեցված մյուս կարևոր ոլորտներից են հանրային ծառայությունները (որոնք կազմել են ընդհանուր գործարքների թվի 26%-ը և ապահովել են 117 մլրդ ԱՄՆ դոլար) և տրանսպորտի ոլորտը (8% և 34 մլրդ ԱՄՆ դոլար): Սա համահունչ է նախորդ տասնամյակի միտումներին, երբ այս ոլորտներում աճեց մասնավոր հատվածի ներգրավվածությունը, ուստի և ազդեցությունը շուկայի վրա, որի հիմքում կառավարությունների խրախուսող մրցակցությունն էր⁴:

Ներկայիս համավարակի պայմաններում թերևս փորձ կարվի բարձրացնելու պետության դերը, ինչը օրինաչափություն կարելի է

⁴ St' u "Privatisation and the Broadening of Ownership of State-Owned Enterprises. Stocktaking of National Practices", OECD (2018), 84 pages: Հղումը՝ <https://www.oecd.org/daf/ca/Privatisation-and-the-Broadening-of-Ownership-of-SOEs-Stocktaking-of-National-Practices.pdf>

համարել, սակայն պետական առևտրային կազմակերպությունների մասնավորեցման ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական փորձով հիմնավորվում է, որ արդյունավետ կառավարում հնարավոր է ապահովել միայն մասնավոր սեփականության պարագայում:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում շուրջ երեք տասնամյակի ընթացքում տնտեսությունում իրականացված բարեփոխումների արդյունքում, ըստ էության, ձեռնարկատիրությունը առանձնացվեց պետությունից (պետական գործառույթներից), և դրանով իսկ ջրբաժան դրվեց ձեռնարկատիրության (բիզնեսի, գործարարության) ու պետության (որպես տնտեսության կարգավորողի և խաղի կանոնները սահմանողի) միջև: Դրանով գործնականում ապահովվեց դասական տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթի սկզբունքը. «Աշխարհում երկու բան անհամատեղելի է թագավորելը և առևտուր անելը»: Նկատենք, որ ներկայումս ՀՀ-ում շարունակվում է այս գործընթացն այն առումով, որ ՀՀ Ազգային ժողովում, ըստ հրապարակված պաշտոնական տվյալների, մի պատգամավորի կողմից տնօրինվող գույքի մեծությունը կազմում է մնացած բոլոր պատգամավորների գույքի արժեքի 97 տոկոսը (այն գնահատվում է 96 մլրդ դրամ):

Դիտարկելով Հայաստանի ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ)՝ անհրաժեշտ է նկատել, որ, համաձայն ընդունված դասակարգման՝ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները բաղկացած են երեք ենթահատվածներից՝

- պետական կազմակերպություններ,
- ազգային մասնավոր կազմակերպություններ (կորպորացիաներ),
- օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (կորպորացիաներ):

Իրականում ԱՀՀ-ն առաջարկում է պայմանականորեն ընդունել, որ կառուցվածքային միավորը վերահսկում է այս կամ այն կազմակերպությունն այն դեպքում, երբ դրա վերահսկողության կամ տրամադրության տակ է գտնվում կազմակերպության՝ ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի ավելի քան 50 տոկոսը (այն պայմանով, որ տվյալ կազմակերպության վերահսկման այլ ապացույցներ բացակայում են, քանի որ որոշ դեպքերում վերահսկողություն կարելի է իրականացնել վերահսկողության փաթեթի կեսից զգալի քիչ մասի ձեռքբերման դեպքում ևս):

Համաձայն վերը նշված մեթոդաբանության՝ Հայաստանի ՀՆԱ-ի ծավալը հիմնական գներով տարանջատվել է նաև ըստ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածների ենթահատվածների՝ հիմնված կանոնադրական կապիտալում դրանց հիմնադիրների բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվության վրա, որը ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:

Եթե կանոնադրական կապիտալում մասնակցել են բոլոր երեք տեսակի հիմնադիրները, ապա կառուցվածքային միավորը դասակարգվել է ըստ այն տեսակի, որն ունի ամենամեծ բաժինը կանոնադրական կապիտալում: Իսկ եթե հիմնադիրների բաժնեմասերը հավասար են (50-50), ապա՝

- պետական և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական,
- պետական և օտարերկրյա բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական,
- օտարերկրյա և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես օտարերկրյա⁵:

Աղյուսակ 1-ում բերված են ՀՀ տնտեսության առանձին հատվածների համախառն ավելացված արժեքը և կառուցվածքը՝ ըստ վերահսկողության հատկանիշի 2015 և 2017 թվականներին, որից հետևում է, որ 2017 թ. ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքի միայն 14,3%-ն է գույացել տնտեսության պետական հատվածում:

Ավելի մանրամասն քննարկենք Հայաստանի Հանրապետությունում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշները և դրանց դիտարկումների ամփոփ արդյունքները: Տնտեսության արդյունավետությանը վերաբերող կարևոր հարցերից է նաև դրա չափման մեթոդների և ցուցանիշների ընտրությունը՝ հատկապես տնտեսության հիմնական օղակների՝ առևտրային կազմակերպությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը գնահատելու համար: Մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի չլուծված հարցերից մեկն այն է, թե արտադրության արդյունավետության մակարդակը որոշելիս մեկ առանձի՞ն ցուցանիշ է անհրաժեշտ հաշվի առնել, թե՞ պետք է կիրառել ցուցանիշների համակարգ:

Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության վերլուծության համար լայնորեն օգտագործվում է գնահատման ցուցանիշների համակարգ, որը բաղկացած է հետևյալ խմբերից՝ (1) գործակիցները հաշվարկելու, (2) վճարունակության (իրացվելիության), (3) շահութաբերության, (4) ֆինանսական կայունության, (5) շրջանառելիության (6) հիմնական միջոցների օգտագործման, (7) կառուցվածքային, (8) շուկայական գործընթացները բնորոշելու, (9) ռեսուրսների օգտագործման և տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման, (10) անվնասաբերության վերլուծության գործակիցներ⁶:

⁵ Տե՛ս «Հայաստանի ազգային հաշիվները. տարեկան և եռամսյակային տվյալներ 2019», Վիճակագրական ժողովածու, ՀՀ Վիճակագրական կոմիտե, Եր., 2019, էջ 112-113:

⁶ Տե՛ս, մասնավորապես, **Ա. Հ. Բայադյան**, Ֆինանսական վերլուծություն, Եր., 2008, էջ 286-295:

ՀՀ տնտեսության ոչ ֆինանսական և ֆինանսական հատվածների համախառն ավելացված արժեքը և կառուցվածքն ըստ վերահսկողության հատկանիշի (2015 թ. և 2017 թ.)⁷

Կառուցվածքային հատվածներ	Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի						Ընդամենը	
	պետական		ազգային մասնավոր		օտարերկրյա վերահսկողության տակ			
	2015	2017	2015	2017	2015	2017	2015	2017
Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	217993.2	210318.1	1421928.9	1702497.9	688042.6	756127.6	2327964.7	2668943.6
	4.7	4.1	31.0	33.4	15.0	14.9	50.7	52.4
Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ)	11220.0	12342.7	92879.7	150495.0	90542.1	109918.1	194641.8	272755.8
	0.3	0.3	2.0	3.0	1.9	2.1	4.2	5.4
Պետական կառավարման մարմիններ	478224.3	504679.2	-	-	-	-	478224.3	504679.2
	10.4	9.9	-	-	-	-	10.4	9.9
Տնային տնտեսություններ	-	-	1581495.5	1617774.2	-	-	1581495.5	1617774.2
	-	-	34.4	31.7	-	-	34.4	31.7
Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ	-	-	14667.4	31200.9	-	-	14667.4	31200.9
	-	-	0.3	0.6	-	-	0.3	0.6
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	707437.5	727340.0	3110971.5	3501968.0	778584.7	866045.7	4596993.7	5095353.7
	15.4	14.3	67.7	68.7	16.9	17.2	100.0	100.0

Ծանոթագրություն. համարիչում՝ մլն դրամ, հայտարարում՝ %-ով ընդամենի նկատմամբ:

⁷ Կազմվել է հեղինակների կողմից՝ «Հայաստանի ազգային հաշիվները. տարեկան և եռամսյակային տվյալներ 2019», Վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 125, 129-ի տվյալների հիման վրա:

Վերը նշված հարցը տնտեսագիտական գրականության մեջ բանավեճի առարկա է⁸. մի տեսակետի կողմնակիցների կարծիքով արտադրության արդյունավետության գիտականորեն հիմնավորված ցուցանիշների մշակումը և կիրառումը պետք է հենվեն տնտեսական օրենքների առավել լրիվ ճանաչման ու դրանց ակտիվ օգտագործման վրա, իսկ մեկ այլ տեսակետի կողմնակիցներն անհրաժեշտ են համարում տնտեսության կառավարման պրակտիկայում օգտագործել մեկ ամփոփ, հավաքական (ինտեգրալային) ցուցանիշ:

Տնտեսագիտական գրականության մեջ առաջարկվող արտադրության տնտեսական արդյունավետության ամփոփ ցուցանիշներից այդ գործառույթին առավել համապատասխանում է շահութաբերությունը, որն էլ բնութագրում է տնտեսական արդյունավետությունը առևտրային կազմակերպությունում (անկախ այն հանգամանքից՝ սեփականատեր(եր)ը մասնավոր անձինք են, թե պետությունը), և որի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում, սկսած 2004 թվականից, իրականացվում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության գնահատումը՝ այդ կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների դիտարկման միջոցով:

Պետական գույքի կառավարման կոմիտեն վերլուծել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների՝ նախարարությունների, կառավարության և նախարարություններին ենթակա մարմինների, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ենթակայության՝ 159 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից 150-ի ֆինանսատնտեսական ցուցանիշները: Վերլուծության արդյունքները վկայում են, որ 2019 թ. այդ ընկերություններից 122-ը (կամ 81.3%-ը) աշխատել են շահույթով, 23-ը (կամ 15.3%-ը)՝ վնասով, իսկ 5 ընկերություններ (կամ 3.3%-ը) շահույթ կամ վնաս չեն ձևավորել: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի վերլուծության ենթարկված 148 ընկերությունից վնասով են աշխատել 30-ը (կամ՝ 2018 թ. ուսումնասիրված կազմակերպությունների 20.3%-ը): Ընդ որում, 2019 թ. ձևավորվել է 11352,9 մլն դրամի վնաս: 2018 թ. վնասը եղել է 8319,8 մլն դրամ, այսինքն՝ վնասի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 3033,1 մլն դրամով, կամ այն աճել է 36,45%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության այդ ընկերություններում վնասի ծավալի ավելացմամբ: Նախորդ տարի նախարարության ընկերություններում ձևավորվել էր 247,5 մլն դրամի վնաս, իսկ 2019 թ.՝ 3422,9 մլն դրամ, որից միայն 3359,2 մլն դրամը «Որոտանի ՀԷԿԷ» ՓԲԸ-ի պատճառած վնասն է:

2019 թ. մոնիտորինգի ենթարկված ընկերությունների զուտ շահույթի ընդհանուր ծավալը 8415,3 մլն դրամ է (նախորդ տարի պետա-

⁸ Տե՛ս, օրինակ, **Дыбаль С. В.** «Финансовый анализ: теория и практика», учебное пособие, М., 2004, էջ 304:

կան հատվածի ընկերությունների գուտ շահույթի ընդհանուր ծավալը 10944,7 մլն դրամ էր): Ընդ որում, շահույթ ձևավորած ընկերությունների կազմում գերակշռող մասը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերություններն են, որոնց շահույթը 5114,6 մլն դրամ է, իսկ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ընկերությունների շահույթը՝ 195,6 մլն դրամ, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ընկերությունների շահույթը՝ 1360,1 մլն դրամ և Երևանի քաղաքապետարանի ընկերության շահույթը՝ 790,2 մլն դրամ: 2019 թ. մոնիտորինգի ենթարկված ընկերությունների գուտ շահույթի ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 2529,4 մլն դրամով:

Նշենք նաև, որ վերլուծության ենթարկված 150 պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը կազմել է 7,79%, ընդ որում՝ այդպիսի բարձր ցուցանիշը պայմանավորված էր հիմնականում ՀՀ հանրային հեռուստատեղիորնկերության խորհրդի ակտիվների բարձր շահութաբերությամբ՝ 110,64%: Այս ցուցանիշն ըստ ոլորտների ունի հետևյալ արժեքները՝ առողջապահության ոլորտի (ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ մարզպետարաններ) 92 ընկերությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը կազմել է 1,926%, էներգետիկայի և ջրային ոլորտում՝ -0,294%, էկոնոմիկայի նախարարության ենթակայության ընկերություններում՝ -1,569%, պաշտպանության ոլորտում՝ 0,979%, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում՝ 2,677%⁹:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015-2017 թվականների տարեկան արդյունքների համար ընդհանուր միտումը ոչ թե վնասով աշխատող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվի աճն է, այլ վերջիններիս ընթացիկ ակտիվների և վնասի ընդհանուր ծավալի աճը: Այդ ցուցանիշները փոքր-ինչ բարելավվել են 2018 և 2019 թվականներին (տե՛ս աղյուսակ 2):

Այդ ժամանակահատվածում նվազել են կազմակերպությունների ինչպես գուտ շահույթի ընդհանուր ծավալը, այնպես էլ շահութաբերության մակարդակը: Մինևույն ժամանակ, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ամփոփման հետաձգված ժամանակը (այն իրականացվում է մինչև հաջորդ տարվա մայիս ամիսը) թույլ չի տալիս օպերատիվորեն կատարել տարեկան ցուցանիշների համեմատական վերլուծություն, և որպես հետևանք՝ տարվա առաջին ամիսների ընթացքում առաջարկություններ մշակել առևտրային կազմակերպությունների

⁹ Տե՛ս «Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2019 թվականի տարեկան արդյունքների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծության արդյունքների (մոնիտորինգ) վերաբերյալ ամփոփ հաշվետվություն» (մաս 1), տեղադրված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» բաժնում (հղումը <https://www.stateproperty.am/page/48>):

գործունեության բարելավման վերաբերյալ: Եվս մեկ հիմնախնդիր է այն, որ պետական գույքի կառավարման կոմիտեի և ՀՀ վիճակագրական կոմիտեի հաշվառումը կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների մասով, անհամադրելի է, այդ պատճառով էլ տնտեսության պետական և մասնավոր հատվածների գործունեության արդյունքները համեմատելու խնդիրը զգալիորեն բարդանում է:

Աղյուսակ 2

Մոնիտորինգի համակարգում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի ամփոփ արդյունքները 2015-2019 թվականներին՝ ըստ ներկայացված հաշվետվությունների¹⁰

№	Ցուցանիշը	Տարիները			
		2015	2017	2018	2019
1	2	3	4	5	6
1	Մոնիտորինգի համակարգում ներառված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ընդհանուր թիվը (հատ), որից	371 ընկ. վերլուծության է ենթարկվել 194 -ը	154 ընկ. վերլուծության է ենթարկվել 142 -ը	154 ընկ. վերլուծության է ենթարկվել 148 -ը	159 ընկ. վերլուծության է ենթարկվել 150 -ը
1.1	Աշխատել են շահույթով	154	117	114	122
1.2	Աշխատել են վնասով	34	21	30	23
1.3	Շահույթ կամ վնաս չեն ձևավորել	6	4	4	5
2	ՀՀ պետական բյուջե շահութաբաժինների գումար են վճարել, հատ	125	-	-	-
3	ՀՀ պետական բյուջե վճարված շահութաբաժինների ընդհանուր գումար, մլն դրամ	604,1	-	-	-
4	Զուտ շահույթի ընդհանուր ծավալը, մլն դրամ	8 947,8	5 434,8	10 944,7	8 415,3
5	Վնասի ընդհանուր ծավալը, մլն դրամ	10 900,6	14 456,2	8 319,7	11 352,8
6	Ընդամենը ակտիվներ, մլն դրամ	-	-	-	706288,4
7	Ոչ ընթացիկ պարտավորություններ (մլն դրամ), այդ թվում՝	-	-	329292,2	359360,9

¹⁰ Աղբյուրը՝ կազմվել է հեղինակների կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, այնուհետև՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական <http://spm.am/am/> կայքի «Հաշվետվություններ» բաժնում տեղադրված տեղեկությունների և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական կայքի «Հաշվետվություններ» բաժնում (հղումը՝ <https://www.stateproperty.am/page/48>) տեղադրված փաստաթղթերի հիման վրա:

7.1	Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	-	-	-	295758,5
7.2	Ակտիվներին վերաբերվող շնորհներ	-	-	-	43 960,7
8	Ընթացիկ պարտավորություններ (մյն դրամ), որից	203879,5	99948,7	186628,3	82356,9
8.1	Գնումների գծով	57518,7	39828,7	34216,3	33650,7
8.2	Պետական բյուջեի գծով	96230,0	2279,1	5459,7	5376,6
9	Ընթացիկ ակտիվներ, մյն դրամ	198459,1	476354,0	200 26,2	138327,7
10	Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հատված, մյն դրամ	194295,0	161401,2	64200,1	176087,6
11	Աշխատողների թվաքանակը, մարդ	25 605	22 113	22 914	23 155

Պետական բաժնեմասով առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների մշտադիտարկումը մինչև 2017 թվականն իրականացվում էր ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի № 1844-Ն որոշմամբ¹¹ սահմանված կարգով: Այնուհետև այն փոխարինվեց ՀՀ կառավարության նույն թվականի հոկտեմբերի 5-ի № 1262-Ն որոշմամբ¹², որի առաջին կետի 3-րդ ենթակետով հաստատվեց «Կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու և առաջարկություններ ներկայացնելու» կարգը (հավելված 4):

Ըստ այդ կարգի՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշման հիմնական նպատակն այդ կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացումն է ու կազմակեր-

¹¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն իրականացնելու, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքներն ամփոփելու և առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի N 898 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 1844-Ն որոշումը, www.arlis.am:

¹² Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, որանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու ու առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 1262-Ն որոշումը, www.arlis.am:

պությունների գործունեության բնագավառում առավել արդյունավետ միջոցառումների մշակումը և իրականացումը¹³:

Կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշվում է դրանց տարեկան արդյունքների հիման վրա՝ ըստ մի շարք հիմնական և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների, որոնցից են՝ հիմնական գործունեությունից ստացված շահույթի մեծությունը, իրացումից հասույթը, աշխատանքի արտադրողականությունը, ընթացիկ իրացվելիության ցուցանիշը (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունը) ու պարտքի գործակիցը (ընդամենը պարտավորությունների և ընդամենն ակտիվների հարաբերակցությունը): Սակայն պետք է նշել, որ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության գնահատման գործընթացից բացառվել են պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունները, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում այդ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վրա ոչ միայն այն առումով, որ, ըստ էության, այդ ընկերությունները մոնիտորինգի տիրույթից դուրս են մնում, այլև այն պատճառով, որ դրանք, տարիներ և նույնիսկ տասնամյակներ շարունակ գտնվելով պետական գույքի մասնավորեցման ծրագրերում, շարունակում են մնալ անորոշության մեջ և դրանով իսկ հսկայական վնասներ պատճառում ՀՀ տնտեսությանը: Նման ձևով կասեցվում է այդ առևտրային կազմակերպություններում ներդրումների իրականացումը, մանավանդ որ անցած տասնամյակների ընթացքում դժվար է մատնանշել գոնե մեկ ընկերություն, որտեղ պետությունը կատարել է զգալի ներդրումներ: Եվ, վերջապես, մասնավորեցման առաջարկվող ընկերությունները դադարում են գործող բիզնես լինելուց՝ արդյունքում վաճառվելով որպես ցածր արժեք և հետևաբար գործարար արժեք չունեցող գույքային միավոր:

Ըստ վերը նշված ընթացակարգի՝ մեր կողմից ուսումնասիրվել են 2018 թ. տարեկան տվյալներով (ավելի թարմ տվյալները դեռևս ամփոփված չեն) այն կազմակերպությունները, որոնց ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջի դրությամբ գերազանցում էր մեկ միլիարդ դրամը (բացառությամբ այն ակտիվների, որոնք կազմակերպությունը չի օգտագործում) և/կամ հաշվետու տարվա գործունեությունից հասույթը գերազանցում էր մեկ միլիարդ դրամը:

Լայնորեն ընդունված պրակտիկա է, երբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը գնահատվում է հարաբերական ցուցանիշների օգնությամբ, և առանց հայտնագործություն անելու կարող ենք նշել, որ ֆինանսատնտեսական արդյունքները բնութագրող կարեվորագուն ցուցանիշներից են շրջանառության գործակիցները, որոնք ցույց են տալիս որոշակի ակտիվների կամ պարտավորությունների օգ-

¹³ Տե՛ս նույն տեղը:

տագործման ինտենսիվությունը (կամ շրջանառության արագությունը): Շրջանառության գործակիցները կազմակերպությունների գործարար ակտիվության ցուցիչներն են:

Ուսումնասիրված կազմակերպությունների համար մեր կողմից հաշվարկված տվյալները վկայում են, որ, օրինակ, ակտիվների շրջանառության ցուցանիշը բոլոր ընկերությունների համար հավասար է 0,29-ի, ինչը նշանակում է, որ այդ կազմակերպությունները մեկ տարվա ընթացքում ստանում են այնքան հասույթ, որը հավասար է իրենց ակտիվների հաշվեկշռային արժեքի 29 տոկոսին, կամ ընկերությունների ակտիվները շրջանառվում են 1248 օրվա (կամ 3,4 տարվա) ընթացքում, ինչը շատ ցածր ցուցանիշ է:

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ակտիվների, ինչպես նաև վերը բերված ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ կազմակերպություններն ունեն գործունեության ցածր արդյունավետություն: Բավական է նշել, որ համատարած մոնիտորինգի համակարգում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների՝ 2019 թ. ստացած զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 8415,3 մլն դրամ, իսկ վնասների ընդհանուր մեծությունը՝ 11352,8 մլն դրամ: Ուստի ամբողջությամբ վերցրած պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վնասները կազմել են 2937,5 մլն դրամ, այսինքն՝ համակարգի ակտիվների վնասաբերությունը կազմել է -0,41% (2937,5 / 706288,4): Իսկ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տնտեսության միջին (որն անհրաժեշտ է տնտեսության նորմալ վերարտադրության համար) շահութաբերության մակարդակը պետք է գտնվի 12-15%-ի սահմաններում, ապա պարզ կդառնա պետական ձեռնարկատիրության համակարգում համակարգային լուրջ վերափոխումների անհրաժեշտությունը:

Վերը շարադրվածը պահանջում է պետական ձեռնարկատիրության հատվածում պետական համալիր ծրագրի իրականացում, ներառյալ (սակայն չսահմանափակվելով միայն դրանցով) կազմակերպություններում պետական քաղաքականության մոտեցումների հստակեցումը, տնտեսավարման առաջավոր ձևերի ներդրումը, պետություն – մասնավոր գործընկերություն խորացումը և համագործակցության ընդլայնումը (այդ թվում՝ գործընկերության նոր ձևերի մշակումը), պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկավարների գործունեության արդյունքների գնահատման և շահադրդման (մոտիվացիայի) կառուցակարգերի մշակումն ու կիրառումը: Նշված հիմնախնդիրները, ըստ դրանց կարևորության և ծավալների, մեկ այլ հետազոտության առարկա են:

Բանալի բառեր – *պետական ձեռնարկատիրություն, մասնավոր ձեռնարկատիրություն, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, ֆինանսատնտեսական ցուցանիշներ, հասույթ, շահույթ, վնաս, ակտիվներ, արտադրության շահութաբերություն, գործունեության արդյունավետություն*

АШОТ МАРКОСЯН, ЭЛЯНОРА МАТЕВОСЯН – Современное состояние и эффективность государственного предпринимательства в Республике Армения. – В результате перехода от тоталитарной экономики к рыночным отношениям в Армении сформировалась смешанная экономика с доминирующей ролью частного сектора, так что ныне существуют как государственные, так и частные коммерческие организации. Власти делают шаги, направленные на расширение роли государственного предпринимательства (деятельности, направленной на получение прибыли). Но никаких серьёзных, экономически обоснованных аргументов в пользу таких намерений и конкретных действий не приводится. В статье, исходя из конкуренции между обоими типами бизнеса, утверждается, что в основе государственного предпринимательства и политики, проводимой в этой области, должна лежать экономическая эффективность. Иными словами, те виды деятельности, которыми занимается частный сектор, не должны становиться объектами государственного предпринимательства. Проведённый анализ показывает также, что до настоящего времени среди государственных организаций нашей страны преобладают убыточные.

Ключевые слова: государственное предпринимательство, частное предпринимательство, коммерческие организации с государственным участием, финансово-экономические показатели, доходы, прибыль, убытки, активы, рентабельность производства, эффективность

ASHOT MARKOSYAN, ELYANORA MATEVOSYAN – Current State and Efficiency of State Entrepreneurship in the Republic of Armenia. – As a result of the transformation from a totalitarian to the market economy, a mixed economy has formed in the Republic of Armenia with the dominant role of the private sector, thanks to which both state and private commercial organizations operate in Armenia. Currently, the state authorities are taking steps to expand the role of state-owned entrepreneurship (by definition, commercial activities aimed at making a profit). At the same time, no serious, economically sound arguments in favor of such intentions and concrete actions by the authorities are given. The authors of the article, based on the fact that there is competition between state and private entrepreneurship in Armenia, believe that economic efficiency should be the basis for the development of state business and the policies pursued in this area. In other words, all those types of economic activities that the private sector is engaged in should not become objects of state entrepreneurship. The analysis carried out by the authors also shows that state-owned enterprises in Armenia have mostly been unprofitable so far.

Key words: state entrepreneurship, private entrepreneurship, commercial organizations with state participation, financial and economic indicators, income, profit, losses, assets, production profitability, efficiency

Ներկայացվել է՝ 10.07.2020

Գրախոսվել է՝ 06.08.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.09.2020